ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: 2023 թվականին ընդունվել է ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառված է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2025թ-ից, որի ընթացքում պետք է իրականացվեն ապահովագրական փաթեթի, ծառայությունների գների հաշվարկման էլեկտրոնային գործիքների պարբերական գնահատումներ, դեղերի ծախսերի հաշվարկի, ապահովագրվածների ռեգիստրի մշակման աշխատանքներ:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԱՀԱ ներդրմանը պատրաստ լինելու նպատակով, Առողջապահության նախարարությանն անհրաժեշտ է տվյալների հավաքագրման և վերլուծության խորհրդատվության իրականացում համապատասխան մասնագետների ներգրավմամբ՝ սույն աշխատանքի նկարագրով նախատեսված գործողությունները սահմանված ժամկետներում իրականացնելու, ինչպես նաև ԱՀԱ ներդրման այլ միջոցառումներով նախատեսված ուղղություններով առողջապահական տվյալների հավաքագրման էլեկտրոնային գործիքների գնահատման խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության Համապարփակ Ապահովագրության ներդրման հետ կապված առողջապահական տվյալների հավաքագրման էլեկտրոնային գործիքների գնահատման խորհրդատվության տրամադրում, այդ թվում

1. Ապահովագրական փաթեթի, առողջապահական ծառայությունների հաշվարկման էլեկտրոնային գործիքների գնահատում, անհրաժեշտ թարմացումների նախագծում:
2. Առողջապահական ծառայությունների հաշվարկման էլեկտրոնային գործիքում դեղերի և պարագաների ծախսերի և աշխատավարձի ծախսերի հաշվարկման մոդուլների մշակում:

3. Տվյալների հավաքագրման, վերլուծության և վիզուալիզացիայի աշխատանքների տեխնոլոգիական և տեղեկատվական անվտանգության խորհրդատվություն:
4. Ապահովագրության թվայնացմամբ պայմանավորված Էլեկտրոնային գործիքների մշակման, դրանց կիրարկման ընթացակարգերի փաստաթղթային աջակցում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետից ակնկալվում է ստանալ ամսեկան հաշվետվություններ աշխատանքի նկարագրով սահմանված գործառույթների իրականացման վերաբերյալ, ինչպես նաև հավաքագրված տեղեկատվության համադրումների, դրանց մեկնաբանությունների ամփոփ տեղեկատվության պարբերական փոխանցում Պետական առողջապահական գործակալությանը:

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետը, ըստ անհրաժեշտության, Պետական առողջապահական գործակալության կողմից կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է մասնակցի սույն աշխատանքի նկարագրով պայմանավորված պրեզենտացիա/ների կազմմանը, նկարագրելով առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները:

ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- բարձրագույն կրթություն մաթեմատիկայի, տվյալագիտության, տվյալների ավտոմատացման բնագավառում,
- Առնվազն 5 տարվա փորձառություն մեծածավալ տվյալների (big data) հետ աշխատանքի
- Առնվազն 3 տարվա փորձ տվյալների մշակման, վերլուծության բնագավառում գործող կազմակերպությունում
- Տվյալների վերլուծություններ իրականացնելու հատուկ փորձ՝ տվյալների բազաների կառուցման, ձևաչափերի մշակման, տվյալների համադրումներ իրականացնելու պրակտիկ և վարժ ունակություններ
- Հայերենի, Ռուսերենի և Անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ,

մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: